ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ԳԻՐՔՆ ԱՐԴԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է

Հաշվապահական գրականությունը համալրվեց ևս մեկ գրքով: Վերջերս Թաթուլ Մովսիսյանը ներկայացրեց իր «Հաշվապահական հաշվառում» աշխատությունը, որը շատ սպասված էր հեղինակի գործընկերների կողմից, քանի որ գիտակրթական հաստատություններում արդիական հաշվապահության վերաբերյալ նյութերի ու գրականության խիստ կարիք կա:

19 գրքերի հեղինակն արտահայտվեց շատ համեստ. «Երբևէ գրածս գրքերից առաջինն է, որի համար շնորհանդես է կազմակերպվել, զուտ որովհետև գրքերիցս յուրաքանչյուրի լույս տեսնելն ինձ համար երեխայի ծնունդի պես տոն է, նույնիսկ առանց շնորհանդեսների»:

«Հաշվապահական հաշվառում» գիրքը հիմնականում ուղղված է ուսանողներին: Մասնագիտական այս ոլորտում անընդհատ տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են կրթական հաստատությունները ապահովել նոր գրքերով:

Վեց բաժնից կազմված գիրքն այնքան մատչելի կերպով է գրված, որ նույնիսկ սկսնակը կարող է ինքնուրույն ծանոթանալ առարկային ու հետագայում խորանալ մասնագիտության մեջ: Բայց այն չափազանց օգտակար կարող է լինել նաև գործող հաշվապահների համար:

«Գիրք գրելու հարցում ամենակարևոր ու ամենաբարդ պահը պարզ գրելն է, որպեսզի ընթերցողը խնդիր չունենա նյութն ընկալելու հարցում: Եղել են օրեր, երբ գրել եմ 15 էջ, ու պատահել է՝ 2 օր կանգ եմ առել ու մտածել մեկ նախադասության շուրջ՝ այն հնարավորինս մատչելի շարադրելու համար: Ինձ համար գլխավոր գնահատականն ուսանողի արձագանքն է և ընկերներիս ու գործընկերներիս գնահատականը, որոնք, ի դեպ, դեռ սևագրերս «փորձաքննության» են ենթարկել՝ աշխատանքներս ուսումնասիրելով անկողմնակալ աչքերով»:

Թաթուլ Մովսիսյանը սկսել է գրել 2000 թ., ու այս ընթացքում եղել են պահեր, երբ գերծանրաբեռնվածության ու լարվածության հետևանքով թաթափ է եղել և որոշել այլևս չշարունակել գրելը (քանզի մեծ պատասխանատվություն է համարում նոր սերնդի համար գրելը): Սակայն, ինչպես պարզվեց, սա հեղինակի համար ուղղակի աշխատանք չէ, ուղղակի կոչում չէ. սա նրա համար կենսակերպ է. «Երբ երկար դադարից հետո սևագրերս կրկին հայտնվեցին աշխատասեղանիս, դուստրս ասաց. «Բայց խոստացել էիր, որ այլևս չես գրելու»՝ ցույց տալով, որ ամենևին զարմացած չէ խոստումս չկատարելու փաստից: Ընտանիքիս համար գաղտնիք չէ, որ ես ապրում եմ դրանով, ու թաթափ լինելու պահերին հենց հարազատներիս ոգեշնչումն է ինձ վերադարձնում կյանք»:

Գրքի շնորհանդեսին ներկա էր նաև Թաթուլ Մովսիսյանի դասախոս պարոն Մանուկյանը, ով հիշում է հեղինակին իբրև դեռ երիտասարդ, հետաքրքրասեր ու պահանջկոտ ուսանող: Ինչպես ինքն է նշում, ամեն անգամ մանրակրկիտ պատրաստվում էր դասախոսությանը՝ Մովսիսյան Թաթուլի հարցերին ստույգ պատասխաններ տալու համար:

Իսկ ինքը՝ հեղինակը, խոստովանում է, որ, չնայած իր գրքերը ճշգրիտ գիտությանն են վերաբերում, ու բոլորն իրեն ճանաչում են նախ որպես ինքնավստահ ու նպատակասլաց անձնավորություն, իրականում ինքը նվիրվող, շուտ բռնկվող ու երազկոտ մարդ է:

Պատրաստեց Լուսինե Խուրշուդյանը